Գերմանական ֆինանսական համագործակցություն
Հայաստանի Հանրապետության հետ
«Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ. Փուլ 1»
Մասհանման ժամկետի երկարաձգում
Վարկային համաձայնագիր

Ամսաթիվ՝ **19 դեկտեմբերի 2014թ.**
Գումարը՝ **50 000 000 եվրո**
BMZ-ՆՀ.՝ **2014 67 950**
Վարկ թիվ՝ **26882**
(Վարկային համաձայնագիր)

Հարգելի՛ նախարար Ջանջուղազյան.

Հղում կատարելով վերոնշյալ Վարկային համաձայնագրին և ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ի գրությանը, տեղեկացնում ենք, որ Վարկային համաձայնագրի 2.2 հոդվածով սահմանված կարգով մասհանման հայտ ներկայացնելու վերջնաժամկետը կարող է երկարաձգվել մինչև 2024 թվականի հունիսի 30-ը՝ պայմանով, որ դուք կկրեք այդպիսի երկարաձգման և փոփոխության հետևանքով KfW-ի կողմից փոխհատուցման ենթակա ծախսերը:

Վարկի մասհանման ժամկետը մինչև 2024 թվականի հունիսի 30-ը լրացուցիչ երկարաձգելու համար փոխհատուցման ենթակա գումարը (Երկարաձգման վերջնական վճար) KfW-ի կողմից կհաշվարկվի կապիտալի շուկայի՝ վերջնական հաշվարկի օրվա դրությամբ գերակայող պայմանների հիման վրա:

Երկարաձգման վերջնական վճարի մի մասը պետք է վճարվի Վարկառուի կողմից:Այս մասնաբաժինը կազմում է 1 300 000 եվրո , եթե այլ բան որոշված չէ Վարկառուի և KfW միջև գրավոր կերպով:

Խնդրում ենք ամենաուշը մինչև 2020 թվականի հունիսի 15-ն ընդունել սույն գրության դրույթներն ու հավաստել, որ Երկարաձգման վերջնական վճարի վճարման համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերը (բացի սույն նամակի վավերացումից) ավարտված են: ավարտված են: Սույն նամակի վավերացման վերաբերյալ Ձեր գրավոր հավաստումն ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում Ձեզ կտրամադրվի փոխանցման համար անհրաժեշտ՝ հաշվի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այդ պահից Երկարաձգման վերջնական վճարը կդառնա պարտադիր և վճարման ենթակա:

(i) Մինչև 2020 թվականի հունիսի 15-ը Ձեր՝ սույն նամակի դրույթներն ընդունելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը, (ii) ոչ ուշ, քան 2020թ. սեպտեմբերի 30-ը սույն նամակի վավերացման վերաբերյալ Ձեր գրավոր հավաստումը և (iii) Երկարաձգման վերջնական վճարն ստանալու դեպքում, KfW-ն համաձայն է Վարկային համաձայնագրի

հետևյալ փոփոխություններին.

Բաժին Ա. Մեկնաբանումը

Բացառությամբ սույն գրությամբ հստակ սահմանված դեպքերի, կամ եթե ենթատեքստով այլ բան չի պահանջվում, Վարկային համաձայնագրում մեծատառով գրված եզրույթները սույն գրության մեջ ունեն նույն նշանակությունը:

Բաժին Բ. Վարկային համաձայնագրի փոփոխությունը

Վարկային համաձայնագիրը փոփոխվում է հետևյալ կերպ.

Հոդված 2.2-ը հանվում և փոխարինվում է հետևյալով.

«KfW-ն իրավունք ունի մերժելու 2024 թվականի հունիսի 30-ից հետո մասհանում կատարելը»:

Բաժին Գ. Շարունակականությունը

Վարկային համաձայնագրի բոլոր մյուս դրույթները, բացառությամբ սույն գրությամբ փոփոխվածների, մնում են անփոփոխ և շարունակում են գործել և մնալ ուժի մեջ:

Բաժին Դ. Լրացուցիչ դրույթներ

1. Սույն գրությամբ Վարկային համաձայնագրի որևէ այլ դրույթ չի փոփոխվում կամ չեղյալ համարվում, և մասնավորապես դրանով չեղյալ չի համարվում Վարկային համաձայնագրով սահմանված մեր որևէ իրավունք՝ բացի սույն գրության մեջ հստակորեն սահմանվածներից:
2. Վարկային համաձայնագրի Հոդված 9.6-ի (Հարկեր և այլ վճարներ), Հոդված 8.4-ի (Աճող ծախսեր), Հոդված 13.6-ի (Կիրառելի իրավունքը) և 13.9-ի (Իրավական վեճերը), Հոդված 13.3-ի (Մասնակի անվավերությունը և բացերը), Հոդված 13.4-ի (Գրավոր ձևը) և Հոդված 10-ի (Վարկին առնչվող տեղեկությունների հրապարակումը և փոխանցումը) դրույթները ներառվում են սույն գրության մեջ, կարծես՝ ամբողջությամբ սահմանված են սույն գրության մեջ, և կարծես՝ Վարկային համաձայնագրի այդ դրույթներին հղումները սույն գրությանն արված հղումներ են:
3. Սույն գրությունը կատարված է 3 բնօրինակով՝ անգլերենով:

Խնդրում ենք ձեր համաձայնությունը տալ վերոնշյալ փոփոխությանը՝ ստորագրելով իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող ձևով և մեկ բնօրինակը վերադարձնելով KfW-ին:

Հարգանքով՝
KfW

[*ստորագրություն*]	[*ստորագրություն*]
Բաժնի պետ	Ծրագրի ղեկավար

Մարիոն Քնիշ
KfW

Ռոբերտ Ռոթ
KfW

Ընթերցվել և համաձայնեցվել է.
Երևան _____

.....
Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս Ֆինանսների նախարարության
Անուն՝
Պաշտոն՝
Երևան _____

.....
Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի
Անուն՝
Պաշտոն՝
Երևան _____

.....
Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
Անուն՝
Պաշտոն՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020թ. հունիսի 22-ին ստորագրված «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում/Ախուրյան գետ – փուլ 1» - մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն